ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

___Հայոց լեզվի և գրականության_
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Հ. Բաբուռյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __16__

«__15__» ___մայիս___ 2023 թ.

_____ՀԼԳ/բ-161_ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ_____ ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ **011301.00.6- Ընդհանուր մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **__Մանկավարժության բակալավր ___**
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ **___Հայոց լեզվի և գրականության _____**
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ **_____Հեռակա_____**
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ հեռակա **__3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ ___**

Դասախոս(ներ) ՝ **____Ասյա Շահինյան_____**
/անուն, ազգանուն/

Էլհասցե՝ hvarmash@mail.ru

Վանաձոր - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում
2. Դասընթացի նպատակը և խնդիրները
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը
7. Ուսումնական աշխատանքները տեսակները
8. Դասավանդման մեթոդներ
9. Ուսումնառության մեթոդները
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
    - 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ
    - 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ
    - 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում
14. Գնահատում
    - 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում
    - 14.2. Հարցաշար
    - 14.3. Գնահատման չափանիշներ
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.

«Մանկական գրականություն» դասընթացը կարևորվում է մանկավարժության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Ընդհանուր մասնագիտական» կրթամասում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

2.1. Դասընթացի նպատակներն են՝

- ✓ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի երկրորդ կուրսի ուսանողներին «Մանկական գրականություն» առարկային վերաբերող գիտելիքներ հաղորդել,
- ✓ խորացնել և ընդլայնել հայ, ռուս և արտասահմանյան մանկագրության մասին ուսանողների ունեցած ընդհանուր գիտելիքները,
- ✓ ուսանողներին ծանոթացնել մանկական գրականության զարգացման պատմությանը,
- ✓ գաղափար տալ մի շարք մանկագիրների կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ, անդրադառնալ նրանց լավագույն գործերին:

2.2. Դասընթացի խնդիրներն են՝

- ✓ ներկայացնել մանկական գրականության դերն ու նպատակը, նրա առանձնահատուկ կողմերն ու զարգացման ընդհանուր բնութագիրը,
- ✓ ամրապնդել գիտելիքները գրականության տեսության հարցերի մասին, որոնք են՝ մանկական գրականության մեջ մտած գրական սեռեր, բանահյուսական ու գրական ժանրեր, գեղարվեստական երկերի վերլուծություն,
- ✓ յուրացնել մանկական գրականության արժևորման նոր ելակետերի առաջադրման հարցերը, տեսական հարցադրումները, պոետիկայի խնդիրները:

3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները.

«Մանկական գրականություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների առկայությունը հայ գրականության պատմությունից:

4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[1].

«Մանկական գրականություն - 2» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա մանկական գրակիանության պատմության տեսական հիմունքները,
2. իմանա մանկագրության, մասնավորապես արտասահմանյան եւ ռուս մանկագրության ուսումնասիրման մեթոդական հիմքերը

---

[1] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում,
4. տիրապետի գրականության համատեքստում մանկագրության զարգացման հետազոտության մեթոդներին,
5. կարողանա հանձնարարված առաջադրանքների կատարման շրջանակներում կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)

ԳԿ1 վերլուծելու և սինթեզելու ունակություն,

ԳԿ3 հենքային և ընդհանուր գիտելիքներ,

ԳԿ5 մայրենի լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցություն:

Միջանձնային կոմպետենցիաներ (ՄՁԿ)՝

ՄՁԿ1 քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,

ՄՁԿ2 թիմային աշխատանք,

ՄՁԿ8 բարոյական արժեքներ:

Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝

ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

ՀԳԿ2 հետազոտություններ կատարելու ունակություններ,

ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն:

Առարկայական (մասնագիտական) կոմպենտենցիա (ԱԿ)

ԱԿ2 հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,

ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,

տեղեկատվությունը,

ԱԿ13 ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս:

5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[2].

«Մանկական գրականություն» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն ու

[2] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել:

հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել իր մասնագիտական գործունեության ընթացքում:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ/120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ
Դասախոսություն	4
Գործնական աշխատանք	6
Ինքնուրույն աշխատանք	110
Ընդամենը	120
Ստուգման ձևը (ստուգարք/ ընթացիկ քննություն/ հանրագումարային քննություն)	քննություն

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Գործնական աշխատանքների** ժամանակ ուսանողը կատարում է լսարանային աշխատանք՝ դասախոսի անմիջական ղեկավարման ներքո: Գործնական պարապմունքները անցկացվում են գործնական խնդիրների լուծման, առաջադրանքների իրականացման, թեստերի, իրավիճակային վերլուծությունների, գործարար խաղերի, խմբային աշխատանքների, տնային առաջադրանքների, ուղեղային գրոհների, ինտերակտիվ ուսուցման միջոցով՝ տեսական գիտելիքները կիրառելու, գործնական ունակությունների և հմտությունների ձեռքբերման և ամրապնդման նպատակով: Դասախոսն առաջադրում է գործնական պարապմունքների թեման, նպատակը, խնդիրները, այն հարցերը, որոնք պետք է

լուծել գործնական պարապմունքի ընթացքում, գործնական պարապմունքի անցկացման մեթոդները և պատասխանում է ուսանողների տված հարցերին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են՝

- **Ռեֆերատ** – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
- **Նախագծերի մեթոդ** – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
- **Հարցի նախապատրաստման մոդել** –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
- **Ինքնուրույն աշխատանք համացանցում** – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
- **Աշխատանքային տետր** – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, գրական երկերի քննարկում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[3].

Հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Մանկական ընթերցանությունը մինչև 19-րդ դարը: Հայ գրականությունը 19-րդ դարի 1-ին կեսին: Խաչատուր Աբովյան: Աբովյանն իբրև հայ մանկական գրականության հիմնադիր: Աշխարհիկ լեզվով գրված առաջին մանկական դասագրքի ստեղծումը նրա կողմից:	1		1		20
2.	Ղազարոս Աղայան: Աղայանը որպես հայ մանկական գրականության նոր կարևոր փուլի հիմնադիր:	1		1		25
3.	Հովհաննես Թումանյան: Հայ մանկական գրականությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:	1		1		25
4.	Խորհրդային մանկական գրականություն: Աթաբեկ Խնկոյան: Ստեփան Զորյան: Հայրապետ Հայրապետյան:			2		20
5.	Հայ մանկական գրականությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում: Վախթանգ Անանյան: Մկրտիչ Կորյուն: Խաժակ Գյուլնազարյան: Սիլվա Կապուտիկյան: Գուրգեն Գաբրիելյան:	1		1		20
ԸՆԴԱՄԵՆԸ		4		6		110

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

[3] Նման է օրացուցային պլանին:

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Խ. Գյուլնազարյան, «Ակնարկներ հայ մանկական գրականության»	1961
2.	Մ. Մելքումյան, «Ետպատերազմյան շրջանի սովետահայ մանկական գրականությունը և նրա կրթադաստիարակչական նշանակությունը»	1960
3.	Ս. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր»	
4.	Ա. Շահինյան, «Հայ մանկագրության մի քանի հարցեր»	2012
5.	Աթ. Խնկոյան, «Երկեր»	
6.	Մ. Արազի, «Արևը», «Արյունոտ ծաղիկներ»	
7.	Ստ. Զորյան, Պատմվածքներ կենդանիների մասին՝ «Չալանկը», «Դեգոն», «Ճանապարհորդ Ջեկոն», «Արաբը», «Շեկոն», «Շամոն», «Մի գիշեր անտառում», «Խաղողի այգում»: Հեքիաթներ: «Վանուշը», «Անիկը», «Ժամացույցը», «Աղավնիներ», «Խուժան Արշոն», «Սև Սեթոն»:	
8.	Հ. Հայրապետյան, «Երկերի ժողովածու»	
9.	Վ. Անանյան, «Սևանի ափին», «Հովազաձորի գերիները», «Որսորդական պատմվածքներ»:	
10.	Մկ. Կորյուն, «Մանկական երկեր», «Առակներ»:	
11.	Խ. Գյուլնազարյան, «Օրերի ճանապարհ» վիպակը»,«Ով ինչ գիտե», «Լավ ճանապարհորդներ», «Նազիկի սիրելիները»:	
12.	Սարմենի, Ս. Կապուտիկյանի, Ս. Մուրադյանի, Գ. Գաբրիելյանի և ուրիշների մանկական բանաստեղծությունների ժողովածուները:	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[4]
1.	Մանկական ընթերցանությունը մինչև 19-րդ դարը Հայ գրականությունը 19-րդ դարի 1-ին կեսին:	Գրերի գյուտից հետո դպրոցների բացումը, երկրի հասարակական-քաղաքական պայմանների հետևանքով վանքերում կենտրոնանալը: Մանկանը ուսուցանող առաջին գրքի կրոնական բնույթը: Դպրոցական գործի լայն թափը Բագրատունյաց թագավորության շրջանում: Դպրոցների համար մասնագիտական գրականության	1	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

[4] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

	Խաչատուր Աբովյան: Աբովյանն իբրև հայ մանկական գրականության հիմնադիր: Աշխարհիկ լեզվով գրված առաջին մանկական դասագրքի ստեղծումը նրա կողմից: Հայ մանկական գրականությունը 19-րդ դարի 2-րդ կեսին: Ռափայել Պատկանյան:	ստեղծումը, ինչպես նաև պատմիչների աշխատությունների օգտագործումը: Հայ գրականության վերածնության շրջանը: Մ. Գոշի և Վ. Այգեկցու առակներն իբրև մանկանը տրվող և ուսուցանող նյութ: Այբբենարանները: Դպրոցների աճը, մանկավարժության զարգացումը, նշանավոր մանկավարժների ասպարեզ իջնելը: Աբովյանի մանկավարժական գործունեությունը: «Նախաշավիղը» և նրա նորությունները, դասավանդման նոր մեթոդ, աշխարհիկ լեզու, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, կապը կյանքի և բնության հետ: Մանկական գրականության հիմնական սկզբունքների ձևավորումը ու կոնկրետ կիրառումը «Նախաշավիղ» դասագրքում: Աբովյանի առակները. «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն: Աբովյանի դերը հայ մանկական գրականության զարգացման գործում: Մանկավարժության և դպրոցական գործի զարգացումը 19-րդ դարի 2-րդ կեսին: Մանկապարտեզային գործի հիմնադրումը: Մանկական պարբերականների աճը: Աբովյանի տրադիցիաների զարգացումը Պատկանյանի կողմից: Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի» թարգմանությունը և Նալբանդյանի գնահատականը: 1880,1881 թ.թ. հրատ. մանկ. բանաստեղծությունների ժողովածուները: Մանկական պոեզիայի թեմատիկան՝ հայրենասիրություն («Օրորոցի երգը», «Արաքսի արտասուքը»), մարդասիրություն. «Վանիչկա»: Բնությունն ու կենդանական աշխարհը Պատկանյանի ստեղծագործություններում: «Չախու» պատմվածքը:		
2.	Ղազարոս Աղայան: Աղայանը որպես հայ մանկական գրականության նոր կարևոր փուլի հիմնադիր:	Աղայանի դերը հայ մանկական պոեզիայի զարգացման և հեքիաթի ժանրի հաստատման ուղղությամբ: Աղայանը իբրև մանկավարժ, մանկական դասագրքի հեղինակ, «Աղբյուր», «Հասկեր» ամսագրերի աշխատակից: Աղայանի մանկական պոեզիան, թեմաները: Աղայանի պատմվածքները: Աղայանն իբրև հեքիաթագիր: Հեքիաթների բնութագրումը: «Անահիտ» հեքիաթը: «Տորք Անգեղը»:	1	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

3.	Հովհաննես Թումանյան:	Թումանյանն իբրև դասական խոշոր մանկագիր: Նրա մասնակցությունը մանկական ամսագրերին և «Լուսաբեր» դասագրքին: Թումանյան մանկական բանաստեղծի թեմաները՝ անցյալի գյուղ, հայրենիք, մանուկ, բնություն, դաստիարակչական արժեքը: Թումանյանի պատմվածքները մանկական ընթերցանության շրջանում. «Գիքորը», «Իմ ընկեր Նեսոն»: Թումանյանի կենդանիների մասին պատմվածքները, լեգենդները մանուկների համար: Թումանյանը հեքիաթագիր: Չարի ու բարու պայքարը դրսևորող հեքիաթները:	1	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
4.	Հայ մանկական գրականությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում: Վախթանգ Անանյան: Մկրտիչ Կորյուն: Խաժակ Գյուլնազարյան: Միլվա Կապուտիկյան: Գուրգեն Գաբրիելյան:	Մանկական գրականության թեմատիկան, հիմնական գծերը: Պատերազմը, մանկան ճակատագիրը և պատանու մասնակցությունը: Հերոսական անցյալի թեման մանկական գրականության մեջ: Մանկական գրականության նոր վերելքը հետպատերազմյան շրջանում: Մանկական պոեզիան հետպատերազմյան շրջանում: Մանկական պարբերականները: Կենսագրական տեղեկություններ: Որսորդի և հայրենի բնաշխարհի կյանքը Վ. Անանյանի որսորդական պատմվածքներում: «Սևանի ափին» արկածային վիպակը: «Հովազաձորի գերիները» վիպակը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծությունները, հանելուկները, առակները, զրույցները, հեքիաթները: Սրանց արժանիքներն ու թերությունները: Հեքիաթային սյուժեներով պիեսները: Կենսագրական տեղեկություններ: Պատերազմից հետո պատմվածքի ժանրին անցնելը: Միջին տարիքի դպրոցահասակին ուղղված «Օրերի ճանապարհ» վիպակը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծուհու մուտքը մանկական գրականություն: Մսուրային տարիքի և նախադպրոցականի դաստիարակումը. վարքագծի արձանագրում, վատ վարքագծի ուրիշին վերագրելն ու դատապարտումը («Այն ո՞վ արեց»): Նրա պոեզիայի արժեքը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծություններ: Դերը մանկական գրականության զարգացման մեջ:	1	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4, ՊԳ9, ՊԳ10, ՊԳ11, ՊԳ12

	Ընդամենը		4	

12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամա-քանակ*	Ստուգման ձևը	Գրականություն[5]
1.	Մանկական ընթերցանությունը մինչև 19-րդ դարը Հայ գրականությունը 19-րդ դարի 1-ին կեսին Խաչատուր Աբովյան Աբովյանն իբրև հայ մանկական գրականության հիմնադիր: Աշխարհիկ լեզվով գրված առաջին մանկական դասագրքի ստեղծումը նրա կողմից:	Գրերի գյուտից հետո դպրոցների բացումը, երկրի հասարակական-քաղաքական պայմանների հետևանքով վանքերում կենտրոնանալը: Մանկանը ուսուցանող առաջին գրքի կրոնական բնույթը: Դպրոցական գործի լայն թափը Բագրատունյաց թագավորության շրջանում: Դպրոցների համար մասնագիտական գրականության ստեղծումը, ինչպես նաև պատմիչների աշխատությունների օգտագործումը: Հայ գրականության վերածնության շրջանը: Մ. Գոշի և Վ. Այգեկցու առակներն իբրև մանկանը տրվող և ուսուցանող նյութ: Այբենարանները: Դպրոցների աճը, մանկավարժության զարգացումը, նշանավոր մանկավարժների ասպարեզ իջնելը: Աբովյանի մանկավարժական գործունեությունը: «Նախաշավիղը» և նրա նորությունները, դասավանդման նոր մեթոդ, աշխարհիկ լեզու, տարիքային առանձնահատկությունների հաշվառում, կապը կյանքի և բնության հետ: Մանկական գրականության հիմնական սկզբունքների ձևավորումը ու կոնկրետ կիրառումը «Նախաշավիղ» դասագրքում: Աբովյանի առակները. «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն: Աբովյանի դերը հայ մանկական գրականության զարգացման գործում:	1	Բանավոր հարցում, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

[5] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

2.	Ռափայել Պատկանյան:	Աբովյանի տրադիցիաների զարգացումը Պատկանյանի կողմից: Դ. Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզոյի» թարգմանությունը և Նալբանդյանի գնահատականը: 1880,1881 թ.թ. հրատ. մանկ. բանաստեղծությունների ժողովածուները: Մանկական պոեզիայի թեմատիկան՝ հայրենասիրություն («Օրորոցի երգը»), մարդասիրություն: «Վանիչկա»: Բնությունն ու կենդանական աշխարհը Պատկանյանի ստեղծագործություններում: «Չախու» պատմվածքը:	1	Բանավոր հարցում, քննարկում, գեղարվեստական երկի վերլուծություն	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
3.	Ղազարոս Աղայան: Աղայանը որպես հայ մանկական գրականության նոր կարևոր փուլի հիմնադիր:	Աղայանի դերը հայ մանկական պոեզիայի զարգացման և հեքիաթի ժանրի հաստատման ուղղությամբ: Աղայանը իբրև մանկավարժ, մանկական դասագրքի հեղինակ, «Աղբյուր», «Հասկեր» ամսագրերի աշխատակից: Աղայանի մանկական պոեզիան, թեմաները: Աղայանի պատմվածքները: Աղայանն իբրև հեքիաթագիր: Հեքիաթների բնութագրումը: «Անահիտ» հեքիաթը: «Տորք Անգեղը»:	1	Բանավոր հարցում, քննարկում, գեղարվեստական երկի	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
4.	Հովհաննես Թումանյան:	Թումանյանն իբրև դասական խոշոր մանկագիր: Նրա մասնակցությունը մանկական ամսագրերին և «Լուսաբեր» դասագրքին: Թումանյան մանկական բանաստեղծի թեմաները՝ անցյալի գյուղ, հայրենիք, մանուկ, բնություն, դաստիարակչական արժեքը: Թումանյանի պատմվածքները մանկական ընթերցանության շրջանում. «Գիքորը», «Իմ ընկեր Նեսոն»: Թումանյանի կենդանիների մասին պատմվածքները, լեգենդները մանուկների համար: Թումանյանը հեքիաթագիր: Չարի ու բարու պայքարը դրսևորող հեքիաթները:	1	Բանավոր հարցում, քննարկում, գեղարվեստական երկի վերլուծություն	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

5.	Խորհրդային մանկական գրականություն: Աթաբեկ Խնկոյան: Ստեփան Զորյան: Հայրապետ Հայրապետյան:	Խորհրդային մանկական գրականություն: 20-30-ական թթ. հայ մանկական գրականություն: Մանկական պարբերականների հիմնադրումը Երևանում, Թիֆլիսում: 20-30-ական թթ. մանկական գրականության բնորոշ թեմաները: Մ. Արազու մանկական պատմվածքները. «Արևը», «Արյունոտ ծաղիկներ»: Կենսագրական տեղեկություններ: Խնկոյանի «Բանաստեղծական փորձեր» ժողովածուն: «Բանաստեղծի վարդերը» պատմվածքը: Բնությանը նվիրված բանաստեղծությունները: Խնկոյանն իբրև առակագիր: Նրա առակների սյուժեները: Հեքիաթներն իբրև առակների թեմատիկայի շարունակություն: Ճանաչողական և դաստիարակչական բնույթի բանաստեղծությունները: Կենսագրական տեղեկություններ: Մանկական երկերի թեմատիկ բազմազանությունը: Անապաստանության թեման. «Խուժան Արշոն», «Սև Սեթոն»: Զորյանի հեքիաթները: Կենդանական պատմվածքի զարգացումը Ստ. Զորյանի կողմից: Մանկան կերպարը և նրա առօրյան Զորյանի պատմվածքներում: Կենսագրական տեղեկություններ: Բնության և դաստիարակչական բնույթի ոտանավորներ: «Ճանաչում եք մեզ», «Ի՞նչ թռչուններ են» բանաստեղծություն-հանելուկների շարքերը, նրանց արժեքը: Առակի ժանրը Հայրապետյանի մոտ: Հայրապետյանի խորհրդային շրջանը: Հայրենական պատերազմի տարիներին գրված պոեմները:	1	Բանավոր հարցում, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

6.	Հայ մանկական գրականությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանում: Վախթանգ Անանյան: Մկրտիչ Կորյուն: Խաժակ Գյուլնազարյան: Սիլվա Կապուտիկյան: Գուրգեն Գաբրիելյան:	Մանկական գրականության թեմատիկան, հիմնական գծերը: Պատերազմը, մանկան ճակատագիրը և պատանու մասնակցությունը: Հերոսական անցյալի թեման մանկական գրականության մեջ: Մանկական գրականության նոր վերելքը հետպատերազմյան շրջանում: Մանկական պոեզիան հետպատերազմյան շրջանում: Մանկական պարբերականները: Կենսագրական տեղեկություններ: Որսորդի և հայրենի բնաշխարհի կյանքը Վ. Անանյանի որսորդական պատմվածքներում: «Սևանի ափին» արկածային վիպակը: «Հովազաձորի գերիները» վիպակը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծությունները, հանելուկները, առակները, զրույցները, հեքիաթները: Սրանց արժանիքներն ու թերությունները: Հեքիաթային սյուժեներով պիեսները: Կենսագրական տեղեկություններ: Պատերազմից հետո պատմվածքի ժանրին անցնելը: Միջին տարիքի դպրոցահասակին ուղղված «Օրերի ճանապարհ» վիպակը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծուհու մուտքը մանկական գրականություն: Մսուրային տարիքի և նախադպրոցականի դաստիարակումը. ծարքագծի արձանագրում, վատ վարքագծի ուրիշին վերագրելն ու դատապարտումը («Այն ո՞վ արեց»): Նրա պոեզիայի արժեքը: Կենսագրական տեղեկություններ: Բանաստեղծություններ: Դերը մանկական գրականության զարգացման մեջ:	1	Բանավոր հարցում, քննարկում, գեղարվեստական երկի վերլուծություն	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4, ՊԳ9, ՊԳ10, ՊԳ11, ՊԳ12,
	Ընդամենը		6		

12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը[6]	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն[7]
1.	Հովհ. Թումանյանի «Մերոնք» պատմվածաշարը	Թումանյանի պատմվածաշարը, ասելիքը, կերպարները, բնորոշ գծերը	Ռեֆերատ	Կիսամյակի ավարտ	Բանավոր, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
2.	Հովհ. Թումանյանի կենդանական հեքիաթները	Հեքիաթի ժանրը, Թումանյանի հեքիաթները, կերպարները	Ռեֆերատ	Կիսամյակի ավարտ	Բանավոր, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
3.	Ռ. Պատկանյանի մանկական արձակը	Ռ. Պատկանյանի մանկական արձակը, բովանդակային շերտերը	Ռեֆերատ	Կիսամյակի ավարտ	Բանավոր, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
4.	Վախթանգ Անանյանի «Հովազաձորի գերիները»	Վ. Անանյանի վիպակը, սյուժեն, կերպարները, ասելիքը	Ռեֆերատ	Կիսամյակի ավարտ	Բանավոր, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4
5.	Ղ. Աղայանի հրաշապատում հեքիաթները	Ղ. Աղայանի հրաշապատում հեքիաթները, գաղափարը	Ռեֆերատ	Կիսամյակի ավարտ	Բանավոր, քննարկում	ՊԳ1, ՊԳ2, ՊԳ3, ՊԳ4

[6] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը:
[7] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն:

13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[8]

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	-
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	-
Սարքեր, սարքավորումներ	-
Համակարգչային ծրագրեր	-
Այլ	

[8] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[9]:

14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

---

[9] «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.06.2022թ.):

14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

1. Հայ մանկական ընթերցանությունը մինչև19-րդ դարը:
2. Հայ մանկական գրականությունը 19-րդ դարի 1-ին կեսին:
3. Աբովյանի առակները:
4. Աբովյանի «Նախաշավիղ» դասագիրքը:
5. Պատկանյանի մանկական պոեզիան:
6. Պատկանյանի մանկական արձակը:
7. Ղ. Աղայանի կյանքը և գրական-մանկավարժական գործունեությունը:
8. Ղ. Աղայանը մանկական բանաստեղծ:
9. Ղ. Աղայանի մանկական պատմվածքները:
10. Ղ. Աղայանի կարծիքը հեքիաթի մասին:
11. Ղ. Աղայանի հրաշապատում հեքիաթները:
12. Ղ. Աղայանի իրապատում հեքիաթները:
13. Հովհ.Թումանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը:
14. Թումանյանը մանկական գրականության տեսաբան:
15. Թումանյանի մանկական պոեզիան:
16. Թումանյանի մանկական լեգենդներն ու բալլադները:
17. Բնությունն ու կենդանական աշխարհը Թումանյանի պատմվածքներում:
18. Թումանյանի «Մերոնք» շարքը:
19. Թումանյանի կարծիքը հեքիաթի մասին:
20. Թումանյանի հրաշապատում հեքիաթները:
21. Թումանյանի իրապատում հեքիաթները:
22. Հայ մանկական գրականությունը և պարբերական մամուլը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին:
23. Աթ. Խնկոյանի նախախորհրդային շրջանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:
24. Աթ. Խնկոյանի մանկական պոեզիան:
25. Աթ. Խնկոյանն առակագիր:
26. Աթ. Խնկոյանի հեքիաթները:
27. Աթ. Խնկոյանի «Բանաստեղծի վարդերը» պատմվածքը:
28. Մանկան հոգեբանության դրսևորումը Զորյանի 1-ին շրջանի ստեղծագործություններում:
29. Անապատանության թեման Զորյանի մանկական արձակում:
30. Մանկան կերպարը և նրա առօրյան Զորյանի պատմվածքներում:
31. Ստ. Զորյանի մանկական պատմվածքները կենդանիների մասին:
32. Ստ. Զորյանի հեքիաթները:
33. Հ. Հայրապետյանի նախախորհրդային շրջանի պոեզիան:
34. Հ. Հայրապետյանի հանելուկները, նրանց ճանաչողական արժեքը:
35. Հայրենական պատերազմի թեման Հ. Հայրապետյանի ստեղծագործություններում:
36. Խորհրդային մանկական գրականությունը և նրա բնորոշ առանձնահատկությունները (20-30 ական թ.թ.):
37. Մ. Արազու մանկական պատմվածքները («Արևը», «Արյունոտ ծաղիկներ»):
38. Հայ մանկական գրականությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:
39. Հայ մանկական գրականությունը հետպատերազմյան տարիներին:
40. Որսորդի և հայրենի բնաշխարհի կյանքը Վ.Անանյանի որսորդական պատմվածքներում:
41. Վ.Անանյանի ստեղծագործությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:
42. Վ.Անանյանի «Սևանի ափին» արկածային վեպը:
43. Վ.Անանյանի «Հովազաձորի գերիները» վեպը:

44. Վ.Անանյանի «Չեխական բարքեր» շարքը:
45. Մ. Կորյունի մանկական բանաստեղծությունները և հանելուկները:
46. Մ. Կորյունն առակագիր:
47. Խ.Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը» վիպակը:
48. Ս.Կապուտիկյանը մանկագիր:
49. Գ. Գաբրիելյանը մանկագիր:

14.4. Գնահատման չափանիշները[10].

- Տեսական գիտելիքները՝ մանկագրության ընդհանուր գործընթացի իմացություն:
- Գործնական աշխատանքները՝ 2 ստուգում:
- Ինքնուրույն աշխատանքը՝ 2 ինքնուրույն աշխատանքի կատարում:

[10] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման:

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ **011301.00.6- Ընդհանուր մանկավարժություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ **011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ **Մանկավարժության բակալավր**
/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	ՀԼԳ/բ-161_ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	2-րդ տարի, 4-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	10	Դասախոսություն	4
			Գործնական աշխատանք	6
	Ինքնուրույն	110		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Քննություն			
Դասընթացի նպատակը	✓ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի երկրորդ կուրսի ուսանողներին «Մանկական գրականություն» առարկային վերաբերող գիտելիքներ հաղորդել, ✓ խորացնել և ընդլայնել հայ, ռուս և արտասահմանյան մանկագրության մասին ուսանողների ունեցած ընդհանուր գիտելիքները, ✓ ուսանողներին ծանոթացնել մանկական գրականության զարգացման պատմությանը, ✓ գաղափար տալ մի շարք մանկագիրների կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ, անդրադառնալ նրանց լավագույն գործերին:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. *Գիտելիք* Տվյալ դասընթացն ավարտելուց հետո ուսանողը պետք է ունենա առարկայի վերաբերյալ համապատասխան թեմաներից մշակումներ, գրի առնվազն երկու ռեֆերատ, կարդացած լինի հանձնարարված գեղարվեստական գրականությունը, լիարժեք պատկերացում ունենա հայ, ռուս և արտասահմանյան մանկական գրականության ընթացքի և զարգացման վերաբերյալ, կարողանա ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնականում: Միևնույն ժամանակ ուսանողը պետք է անգիր հատվածներ իմանա հանձնարարված չափածո գործերից, մասնակցած լինի բանավիճային քննարկումներին: *Հմտություն* ➢ գրական վերլուծության ենթարկել անհրաժեշտ մանկական երկերը,			

	➢ անգիր հատվածներ ասել չափածո մանկագրությունից, ➢ զանազանել գրական ժանրերը: *Կարողունակություն* Տիրապետել մանկական գործերի վերլուծության սկզբունքներին ու մեթոդներին, քննարկման մասնակցելու կանոններին:
Դասընթացի բովանդակությունը	Թեմա 1. Հայ մանկական ընթերցանությունը մինչև19-րդ դարը: Հայ մանկական գրականությունը 19-րդ դարի 1-ին կեսին: Թեմա 2. Աբովյանի առակները: Աբովյանի «Նախաշավիղ» դասագիրքը: Թեմա 3. Պատկանյանի մանկական պոեզիան: Պատկանյանի մանկական արձակը: Թեմա 4. Ղ. Աղայանի կյանքը և գրական-մանկավարժական գործունեությունը: Ղ. Աղայանը մանկական բանաստեղծ: Ղ. Աղայանի մանկական պատմվածքները: Ղ. Աղայանի կարծիքը հեքիաթի մասին: Ղ. Աղայանի հրաշապատում հեքիաթները: Ղ. Աղայանի իրապատում հեքիաթները: Թեմա 5. Հովհ.Թումանյանի կյանքն ու գրական-հասարակական գործունեությունը: Թումանյանը մանկական գրականության տեսաբան: Թումանյանի մանկական պոեզիան: Թումանյանի մանկական լեգենդներն ու բալլադները: Բնությունն ու կենդանական աշխարհը Թումանյանի պատմվածքներում: Թումանյանի «Մերոնք» շարքը: Թումանյանի հեքիաթները: Թեմա 6. Հայ մանկական գրականությունը և պարբերական մամուլը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին: Թեմա 7. Աթ. Խնկոյանի նախախորհրդային շրջանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Աթ. Խնկոյանի մանկական պոեզիան: Աթ. Խնկոյանն առակագիր: Աթ. Խնկոյանի հեքիաթները: «Բանաստեղծի վարդերը» պատմվածքը: Թեմա 8. Մանկան հոգեբանության դրսևորումը Զորյանի 1-ին շրջանի ստեղծագործություններում: Անապատանության թեման Զորյանի մանկական արձակում: Մանկան կերպարը և նրա առօրյան Զորյանի պատմվածքներում: Ստ. Զորյանի մանկական պատմվածքները կենդանիների մասին: Ստ. Զորյանի հեքիաթները: Թեմա 9. Հ. Հայրապետյանի նախախորհրդային շրջանի պոեզիան: Հ. Հայրապետյանի հանելուկները, նրանց ճանաչողական արժեքը: Հայրենական պատերազմի թեման Հ. Հայրապետյանի ստեղծագործություններում: Թեմա 10. Խորհրդային մանկական գրականությունը և նրա բնորոշ առանձնահատկությունները (20-30 ական թ.թ.): Թեմա 11. Մ. Արազու մանկական պատմվածքները («Արևը», «Արյունոտ ծաղիկներ»): Թեմա 12. Հայ մանկական գրականությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Հայ մանկական գրականությունը հետպատերազմյան տարիներին: Թեմա 13. Որսորդի և հայրենի բնաշխարհի կյանքը Վ.Անանյանի որսորդական պատմվածքներում: Ստեղծագործությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին: «Սևանի ափին» արկածային վեպը: «Հովազաձորի գերիները» վեպը: «Չեխական

	բարքեր» շարքը: Թեմա 14. Մ. Կորյունի մանկական բանաստեղծությունները և հանելուկները: Մ. Կորյունն առակագիր: Թեմա 15. Խ. Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը» վիպակը: Թեմա 16. Ս. Կապուտիկյանը մանկագիր: Թեմա 17. Գ. Գաբրիելյանը մանկագիր:
Գնահատման մեթոդները և չափանիշները	• Տեսական գիտելիքները՝ մանկագրության ընդհանուր գործընթացի իմացություն: • Գործնական աշխատանքները՝ 4 ստուգում: • Ինքնուրույն աշխատանքը՝ 2 ինքնուրույն աշխատանքի կատարում:
Գրականություն	Պարտադիր- 1. Խ. Գյուլնազարյան, «Ակնարկներ հայ մանկական գրականության» 2. Մ. Մելքումյան, «Եռապատերազմյան շրջանի սովետահայ մանկական գրականությունը և նրա կրթադաստիարակչական նշանակությունը» 3. Ս. Լալախանյան, «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր» 4. Ա. Շահինյան, «Հայ մանկագրության մի քանի հարցեր» 5. Աթ. Խնկոյան, «Երկեր» 6. Մ. Արազի, «Արևը», «Արյունոտ ծաղիկներ» 7. Ստ. Զորյան, Պատմվածքներ կենդանիների մասին՝ «Չալանկը», «Դեգոն», «Ճանապարհորդ Ջեկոն», «Արաբը», «Շեկոն», «Շամոն», «Մի գիշեր անտառում», «Խաղողի այգում»: Հեքիաթներ: «Վանուշը», «Անիկը», «Ժամացույցը», «Աղավնիներ», «Խուժան Արշոն», «Սև Սեթոն» 8. Հ. Հայրապետյան, «Երկերի ժողովածու» 9. Վ. Անանյան, «Սևանի ափին», «Հովազաձորի գերիները», «Որսորդական պատմվածքներ» 10. Մկ. Կորյուն, «Մանկական երկեր», «Առակներ» 11. Խ. Գյուլնազարյան, «Օրերի ճանապարհ» վիպակը»,«Ով ինչ գիտե», «Լավ ճանապարհորդներ», «Նազիկի սիրելիները» 12. Սարմենի, Ս. Կապուտիկյանի, Ս. Մուրադյանի, Գ. Գաբրիելյանի և ուրիշների մանկական բանաստեղծությունների ժողովածուները